«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքները և մաթեմատիկան

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝Նելլի Հայրապետյան

Ուսումնական հաստատություն՝Արաքսավանի միջն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. **Ներածություն.....3**
2. Պարտք կամ պարտականություն……4
3. Պարտք և պատասխանատվություն……6
4. Պարտականություն և իրավունք……..8
5. Արատներ, որոնք հանգեցնում են մարդու' որպես բարոյական էակի, ինքն իր հանդեպ պարտքի խախտման……10
6. Պարտքը ուրիշների հանդեպ, սեր և հարգանք……12
7. Ուրիշների հանդեպ սիրո պարտքին հակասող արատներ……14
8. Եզրակացություններ……16
9. Օգտագործված գրականության ցանկ……..17

Ներածություն

Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեքային համակարգի կարևորագույն մասը: Իսկ որտե՞ղ պետք է ձևավորվեն այդ արժեքները՝ ընտանիքո՞ւմ, շրջապատո՞ւմ, եկեղեցո՞ւմ, թե՞ դպրոցում: Հետազոտողները, կարևորելով բոլոր այս օղակների դերը, կանգ են առնում նաև վերջին օղակում՝ հանրակրթական դպրոցում արժեքների ձևավորման խնդրի վրա[1]:Հարկ է նշել, որ հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին[2]:Հարկ է նկատել, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի նման արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ[3]:Բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ ունեն հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի առարկաները:

Մեր աշխատանքներում մենք դիտարկել ենք մաթեմատիկայի դասավանդման գործընթացի միջոցով բարու, արդարության, առաքինության, կյանքի իմաստի և երջանկության բարոյական արժեքների ձևավորման խնդիրներին: Սույն աշխատանքը նշված շարքի շարունակությունն է և նվիրված է մարդու՝ իր և ուրիշների հանդեպ պարտքի կամ պարտականության հետ առնչվող արժեքներին: Հասարակության և պետության՝ մարդու հանդեպ պարտականություններին, ինչպես նաև ընկերային խմբերի, հասարակության և պետության հանդեպ մարդու պարտականություններին մենք կանդրադառնանք առանձին:

---

[1] Չ. Ուայթ, Քաղաքացիական կրթության բարոյական տեսանկյունը, սովորությու՞ն, թե՞ գիտակցական ընտրություն: Մարդ և հասարակություն, N1, 2010:

[2] Հանրակրթության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Մնտարես, 2004:

[3] Հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի առարկայական չափորոշիչները, Մաթեմատիկան դպրոցում, N 3-4, 2005 թ:

Պարտք կամ պարտականություն

Գոյություն ունեն պարտքի կամ պարտականության հետևյալ տեսակներ[4]:

1) Որպես կենդանի էակ' մուրդր ունի պարտականություններ իր և բնության հանդեպ: ա. Իր գոյությունը պահպանելու պարտականություն, որի համար նա հոգ է տանում իր կենսական կարիքների համար' սնվում է, հագնվում, տուն կառուցում և այլն: բ. Մարդկային տեսակը պահպանելու պարտականություն, որի համար մարդը ամուսնանում է, ընտանիք կազմում, երեխաներ ունենում, հոգ է տանում նրանց մեծացնելու մասին:

2) Որպես հոգևոր էակ' մարդը ունի պարտավորություններ իր և ուրիշների հանդեպ.

ա. Պարտականություններ իր հանդեպ' որպես հոգևոր էակի, որի համար մարդը հոգ է տանում իր հոգևոր կարիքները բավարարելու մասին' կրթություն է ստանում, մասնագիտական գործունեություն ծավալում, հաղորդակցվում է հոգևոր արժեքների հետ:

բ. Պարտականություններ ուրիշների' - ծնողների, երեխաների, հարազատների, հարևանների և իր հետ առնչվող այլ մարդկանց հանդեպ, - ընտանիքի, աշխատանքային կոլեկտիվի, ընկերային այլ խմբերի, հասարակության, ժողովրդի, պետության, հայրենիքի հանդեպ:

3) Հասարակությունը և պետությունը նույնպես ունեն պարտականություններ մարդու հանդեպ:Մարդու անհատական և ընկերային կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ կարևորագույն արժեքներից մեկը պարտքն է: Ըստ Հեգելի, մարդու պարտքը արդար գործ կատարելն ու ընդհանուրի բարիքի համար հոգ տանելն է[5]:

---

[4] Э. Кант, Сочинения, т.4, ч.2, М., 1965:
[5] Г. Гегель, Соч., Т. 7, М., 1977:

Եթե անդրադառնալու լինենք բարոյական ոլորտին, ապա այստեղ մարդու պարտքն է հետևել առաքինությանը, ուրիշների նկատմամբ լինել բարի և բարիք գործել իր հնարավորությունների սահմաններում, հեռու մնալ արատներից և դիմակայել չարին: Կրթական ողջ գործընթացը, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը՝ մասնավորապես, նաև պարտքի և պարտականությունների իրականացման, համապատասխան արժեքների ձևավորման գործընթաց է:

Պարտք և պատասխանատվություն

Պարտքի, պարտականությունների նկատմամբ մարդու վերաբերմունքը արտահայտվում է պատասխանատվությամբ: Պատասխանատվության ավելի թույլ ձևերն են պարտքի հանդեպ ցուցաբերվող լրջությունը, բարեխղճությունը, հոգատարությունը, շահագրգռվածությունդ հետաքրքրությունը: Պատասխանատվության հակադրությունը անպատասխանատվությունն է, որի ավելի թույլ ձևերն են թեթևամտությունը, անտարբերությունը, անբարեխղճությունը, անհոգությունը, անփութությունը: Կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են թե' ուսուցչի, թե' աշակերտի կողմից այս ուղղությամբ իրենց ունեցած պարտքի կատարման հանդեպ պատասխանատվության համապատասխան դրսևորումներ: Բնականաբար, գործընթացի առաջին և հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, որը կրում է նաև աշխատանքային պարտավորություններ: Սակայն ուսուցչի աշխատանքային պարտավորությունների իրականացումը, եթե խոսքը վերաբերում է բարոյական դաստիարակությանը, մասնավորապես' նրա պարտքին վերաբերող գործառույթների իրականացմանը, չափազանց բարդ գործընթաց է: Հիմնական բարդությունը կայանում է դրանց ոչ հստակության, դժվար վերահսկելիության և սպասվելիք արդյունքների ստուգման ու գնահատման դժվարության կամ անհնարինության մեջ: Իսկապես, եթե սովորողի մոտ գիտելիքի կամ կարողության առկայությունը կարելի է ստուգել, գնահատել և վերահսկել բանավոր կամ գրավոր հարցման միջոցով, ապա բարոյական այս կամ այն որակի առկայությունը կարելի է ստուգել միայն այնպիսի իրադրության պայմաններում, որտեղ այդ որակը հնարավորություն ունի դրսևորվելու: Եվ դրսևորվելու դեպքում էլ ստուգվողը կարող է դիտավորյալ չցուցաբերել այդ որակը, կեղծել, եթե դա իրեն ձեռնտու չէ: Միաժամանակ, ուսուցիչը դաստիարակչական խնդիրները իրականացնելու շահագրգռվածություն և կոնկրետ պայմանագրով

ամրագրված պարտավորություն չունի, իսկ չկատարված աշխատանքի համար էլ պատասխանատվություն չի կրում: Եվ դաստիարակության ամբողջ խնդիրը, ըստ էության, հանգում է ուսուցչի բարոյական մոտեցմանը. ինչքանո՞վ է նա կատարում ուսուցիչ լինելու իր առաքելությունը, որը առաջին հերթին դաստիարակ է:

Ավելի նուրբ է աշակերտի կողմից կրթական խնդիրների իրականացման հարցում պատասխանատվության դրսևորման հարցը: Ի տարբերություն ուսուցչի, աշակերտը կարող է նաև չգիտակցել իր պատասխանատվությունը, մանավանդ՝ երբ խոսքը վերաբերում է դաստիարակության այնպիսի նուրբ ոլորտին, ինչպիսին պարտքին վերաբերող խնդիրներների իրականացումն է: Եվ այստեղ ուսուցչի պարտականություններին ավելանում է նաև աշակերտի մոտ համապատասխան գիտակցության ձևավորման խնդիրը: Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը այս ուղղությամբ պահանջում է ավելի մեծ ու լրացուցիչ ջանքեր թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի կողմից: Թեթևամտության, անտարբերության, անբարեխղճության, անհոգության և անփութության յուրաքանչյուր դրսևորում կարող է ձախողել ուսումնական նյութի յուրացումը, ինչը բացասաբար կանդրադառնա նաև այդ նյութից կախված հետագա թեմաների յուրացման վրա: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մաթեմատիկական նյութի յուրացումը անհնար է պատկերացնել առանց պատասխանատվության և նրա հետ կապված' վերը նշված որակների դրսևորման, և, հետևապես, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծապես կարող է նպաստել այդ որակների ձևավորմանը:

Պարտականություն և իրավունք

Պարտականությունը սերտորեն կապված է նաև իրա վունքի հետ և հանդես է գալիս նրա հետ միասին: Մեկի համար իրավունքի ստացումը ենթադրում է մյուսի կողմից պարտավորությունների ստանձնում, և հակառակը՝ մեկի համար պարտավորությունների ստանձնումը ենթադրում է մյուսի կողմից իրավունքի ստացում: Իրավունքը և պարտականությունը կարող են սահմանվել իրավական փաստաթղթերով (սահմանադրությամբ, մարդու իրավունքների մասին հայտարարագրերով և դրանք ամրագրող օրենքներով, իրավական պայմանագրերով և այլն) և բարոյական նորմերով: Երբ կողմերից մեկը չի կատարում իր պարտավորությունները, ապա խախտում է մյուս կողմի իրավունքները: Իսկ դրա դեմ գործում է հասարակական կարծիքը, իրավապահ մարմինները և այլն: Ասվածից հետևում է, որ իրավունքի և պարտականությունների փոխհարաբերություններում առաջնայինը իրավունքն է՝ պարտականությունը պայմանավորվում է իրավունքով: Չի կարելի իրավունքը պայմանավորել պարտականությամբ: Հակառակ մոտեցումը հատուկ է ամբողջատիրական և բռնատիրական համակարգերին ու մտածելակերպին, ավելի լայն պարտականություններ ունեցողը ավելի մեծ իրավունքներ ունի, իսկ քիչ պարտականություններ ունեցողը ունի նաև աննշան իրավունքներ: Ժամանակին, օրինակ, Խորհրդային Միությունում չափազանց մեծ պատավորություններ ունեցող մարդիկ կային, որոնք նաև անսահման իրավունքներ ունեին և լուծում-տնօրինում էին քիչ պարտավորություններ և, ուրեմն, նաև համարյա իրավունք չունեցող մարդկանց ճակատագրերը, իհարկե՝ իրենց հայեցողությամբ: Եվ դա դրսևորվում էր պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այսօր էլ հետխորհրդային պետություններում կարելի է հանդիպել իրավունքի և պարտավորությունների նման խեղաթյուրված ընկալումներ: Մարդկանց կարիքների համար ստեղծված ծառայություններն, օրինակ, քաղաքացու հետ կնքում են այնպիսի պայմանագրեր,

որոնցում քաղաքացիների իրավունքները անտեսվում են, պարտավորությունները՝ ուռճացվում, իսկ այդ ծառայությունների համար ընդհակառակը՝ իրավունքները մեծացվում, պարտավորությունները՝ սահմանափակվում:

Ինչ վերաբերում է աշակերտների իրավունքներին և պարտավորություններին, ապա խորհրդային կրթական մոտեցումները միայն պարտականություններ էին ամրագրում աշակերտների համար նախատեսված կանոնակարգերում: Նպատակը ոչ թե ազատ մտածող քաղաքացի, այլ քաղաքական համակարգին հնազանդ ծառայողներ պատրաստելն էր: Այսօրվա մեր կանոնակարգերը կարծեք չեն տարբերվում նախկիններից: Իսկ պայմանագրերում սովորողների իրավունքի թռուցիկ անդրադարձների վրա էլ ուշադրություն դարձնող չկա:

Արատներ, որոնք հանգեցնում են մարդու՝ որպես բարոյական էակի, ինքն իր հանդեպ պարտքի խախտման

Մարդու՝ որպես բարոյական էակի, ինքն իր հանդեպ պարտքի կարևորագույն դրսևորումներից մեկը ճշմարտախոսությունն է՝ իր իմացածը արտահայտելը: Իհարկե, մարդը կարող է իր որոշ մտքեր չարտահայտել, թաքցնել, դա պարտքի խախտում չէ: Սակայն ճշմարտության հակադրության՝ կեղծիքի արտահայտումը մարդու՝ որպես բարոյական էակի, ինքն իր հանդեպ պարտքի մեծագույն խախտում է: Եթե իրավական դաշտում կեղծիքը ուղղված է ուրիշին և պատժվում է ուրիշին հասցրած վնասի համար, ապա բարոյական տեսանկյունից կեղծիքը ուղղված է նախ և առաջ այն թույլ տվող մարդուն, կեղծիքը վիրավորում, նվաստացնում է նրա մարդկային արժանապատվությունը, որովհետև մարդը հանդես չի գալիս որպես մարդ, որը, որպես այդպիսին, պարտք ունի հաղորդելու իր իմացածը, այլ ոչ դրա հակառակը: Այդ պատճառով կեղծիքը մարդուն արժանացնում է արհամարանքի ոչ միայն ուրիշների, այլև իր կողմից, կեղծիք թույլ տվող մարդը խղճի խայթ է զգում, ամաչում է, կարմրում և այլն:

Հետևապես, մաթեմատիկական կրթությունը մեծապես նպաստում է մարդու ներքին դատավորի՝ խղճի առջև խոստովանության կամ բարոյական դատի կայացմանը: Միևնույն ժամանակ, մաթեմատիկայի դասավանդման ողջ գործընթացը՝ տեսական և գործնական նյութի, վարժությունների ու խնդիրների դիտարկմամբ, ճշմարիտի բացահայտման գործընթաց է և իրականացվում է ճշմարիտի մշտական ուղեկցությամբ: Եվ ճշմարիտի հետ այդպիսի մշտական ու հետևողական առնչությունը պետք է, որ նպաստի ազնվության առաքինության և խոչընդոտի անազնվության կամ կեղծիքի արատի ձևավորմանը: Մարդը որպես բանական էակ՝ բանականություն կրող, բարձրագույն արժեք է և, որպես այդպիսին, չի կարող օգտագործվել որևէ նպատակի համար՝ անգամ իր կողմից: Այդ առանձնահատուկ արժեքը կամ արժանիքը ստիպում է ուրիշ բանական էակներին (և իրեն նույնպես) հարգել իրեն, ուրիշների հետ համեմատվելիս իրեն գնահատել միայն հավասարության հիմքով: Մարդու պարտքն է իր մեջ հարգել մարդկային բանական ցեղին պատկանելու արժանիքը, որ կոչվում է արժանապատվություն: Իր մեջ մարդկային արժանապատվության անտեսումը հանգեցնում է

ստրկամտության. Ուրիշների ողորմածությանը արժանանալու նպատակով սեփական բարոյական արժանիքների նսեմացումը, որ կեղծ հնազանդություն է, նույնպես նպաստում է սեփական արժանապատվության նսեմացմանը և հակասում է ինքն իր հանդեպ պարտքին: Հնադարի հայտնի առակագիր Եզոպոսը հնարավորություն ուներ մնալ կենդանի և ստրուկ: Բայց նա գերադասեց ստանալ ազատություն և ենթարկվել կախաղանի: Աա սեփական մարդկային արժանապատվության հարգման լավագույն օրինակներից մեկն է մարդկության ողջ պատմության ընթացքում[6]:

[6] В. Г. Иванов, Этика, М ., 2007.

Պարտքը ուրիշների հանդեպ, սեր և հարգանք

Կանտը առանձնացնում է ուրիշի նկատմամբ մարդու պարտականությունների երկու տեսակ: Պարտականությունների առաջին տեսակի կատարումը համարվում է ծառայություն, որով նաև պարտականություն է դրվում ուրիշների վրա: Նման պարտականությունների կատարմանը ուղեկցում է սիրո զգա ցմունքը. Պարտականությունների երկրորդ տեսակի կատարումը ուրիշների վրա պարտականություն չի դնում, այն պարտք է, որ հետևում է պարտավորությունից: Նման պարտականությունների կատարմանն էլ ուղեկցում է հա րգա նքի զգա ցմունքը. Ուսուցչի' աշակերտին ցույց տրվող օգնությունը նրա պարտակնությունն է, որ բխում է իր պարտավորություններից և, հետևապես, այն աշակետի վրա պարտականություն չի դնում: Ուսուցչի այս աշխատանքը արժանի է հարգանքի: Իսկ ընկերոջ կողմից աշակերտին ցույց տրվող օգնությունը սիրո զգացմունքի դրսևորում է, որովհետև չի բխում աշակերտի նկատմամբ նրա պարտավորությունից: Նման օգնությունը ենթադրում է նաև պարտավորության ստանձնում օգնվողի կողմից:

Այնպես, ինչպես ֆիզիկական աշխարհում մարմինները հավասարակշռության մեջ են գտնվում ձգողական և վանողական ուժերի հավասարակշռության շնորհիվ, բարոյական աշխարհում նույնպես մարդկանց միջև բարոյական կապը իրականացվում է ձգողական և վանողական ուժերի հավասարակշռության միջոցով: Փոխադարձ սիրո սկզբունքը մարդկանց ձգում է, մոտեցնում իրար, իսկ փոխադարձ հարգանքի սկզբունքը' նրանց հեռացնում, պահում է որոշ հեռավորության վրա: Եվ բարոյական աշխարհի ներդաշնակությունը, մարդկանց միջև բարոյական ներդաշնակությունը ստացվում է այդ ձգողական ու վանողական ուժերի հավասարակշռության արդյունքում (տես [1]): Մաթեմատիկայի դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մաթեմատիկական կրթություն ստացած

մարդուն դարձնում են ցանկալի՝ ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից: Այդ պատճառով, մաթեմատիկական կրթությունը մեծացնում է ուրիշների կողմից սիրված լինելու հնարավորությունները: Մյուս կողմից, մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է նրա նկատմամբ մարդկանց հարգանքի զգացմունքը: Հետևապես, մաթեմատիկական կրթությունը նպաստում է մարդկանց միջև բարոյական ներդաշնակության հաստատմանը:

Ուրիշների հանդեպ սիրո ընդհանրական պարտքը, բարեհաճություն, մարդասիրություն

Սերը այստեղ դիտարկվում է ոչ որպես համակրանք, այլ որպես գործողություն՝ գործնական բարեհաճություն: Ամենաընդհանրական իմաստով սերը ուրիշների նկատմամբ բարեհաճություն է, մա րդա սիրություն (հումանիզմ), երբ մարդը հաճույք է ստանում ուրիշի բարօրությունից, ուրիշի լավ լինելուց ինքը նույնպես լավ է զգում: Մարդասիրության հակառակ դրսևորումը մարդատյացությունն է: Մարդատյացը հաճույք է ստանում միայն այն դեպքում, երբ ուրիշները վատ են զգում: Բարեհաճությունը, մարդասիրությունը մարդկանց պարտքն է իրար հանդեպ. քանի որ ես ցանկանում եմ ուրիշների բարեհաճությունը իմ նկատմամբ, ապա ես նույնպես պետք է բարեհաճ գտնվեմ ուրիշների հանդեպ: Միայն այս իմաստով պետք է հասկանալ՝ «Սիրիր մերձավորիդ անպես, ինչպես ինքդ քեզ» աստվածաշնչյան պատգամը: Իսկ ուղղակի իմաստով հասկանալու դեպքում այն դառնում է ծայրահեղ, ինչը ընդունելի չէ մարդասերի համար: Ընդունելի չէ նաև մյուս ծայրահեղ մոտեցումը՝ մարդկանց անհավասարության, հարաբերությունների թշնամական բնույթի բացարձականացումը, ինչը լավագույնս է արտահայտվում «մարդը մարդու համար գայլ է» հռոմեական հայտնի ասացվածքում: Իրականում մարդկային համակեցությունը ենթադրում է թե՛ մեկ, թե՛ մյուս մոտեցումները, և չի կարելի դրանցից մեկը բացարձականացնել. սերը և ատելությունը, բարեկամությունը և թշնամանքը, հավասարությունը և անհավասարությունը կյանքում մեծ մասամբ հանդես են գալիս կողք-կողքի: Լավ է ասել պարսիկ բանաստեղծ Սաադի Շիրազին՝ մի եղիր գայլ, բայց և մի եղիր ոչխար, որ գայլերը քեզ չուտեն: Ծայրահեղ մոտեցումներից մեկը արտահայտում է էգոիզմը, կենսակերպ, որտեղ սեփական շահը դիտվում է որպես ամենաբարձր բարիք և, ըստ այդմ, էգոիստը ձգտում է անձնական շահերի առավելագույն բավարարման՝ հաշվի չառնելով ուրիշների և ընդհանուրի շահերը, անգամ՝ խախտելով դրանք: էգոիզմի հակառակ երևույթը ա լտ րուիզմն է, բարոյական

դիրքորոշում կամ սկզբունք, որի համաձայն յուրաքանչյուր մարդ պետք է կատարի անշահախնդիր գործողություններ, գործողություններ, որոնք ծառայում են իրենց մոտիկների, այլ մարդկանց և ընդհանուրի շահերին: Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարիք ունի ուղղորդվելու դեպի մարդկանց մարդասիրական պարտքի իրականացում, ինչին կարող է խանգարել այդ գործընթացում մարդկանց մտավոր գործունեության համար անհավասար պայմանների ստեղծումը:

Եզրակացություններ

Այսպիսով, վերլուծելով վերը նշված դրույթները, կարելի է եզրակացնել հետևյալը.

1. Մաթեմատիկայի դասապրոցեսի ողջ ընթացքում՝ տնային աշխատանքների կատարում, դասի պատասխանում, նոր դասը հասկանալ, դասարանում առաջադրված խնդիրը կամ վարժությունը լուծել, ուսուցչի ուշադրությանը արժանանալ, սեփական շահը դիտարկվում է որպես հիմնական բարիք և նպատակ, ինչը նպաստում է էգոիզմի ձևավորմանը և ամրապնդմանը: Հետևապես, այստեղ մեծ նշանակություն ունի դասապրոցեսի կազմակերպումը: Երբ դասը վեր է ածվում զուտ մաթեմատիկայի ուսուցման, որտեղ ի ցույց են տրվում, երևում և համեմատվում աշակերտների մաթեմատիկական ընդունակությունները, և գլուխ է բարձրացնում մրցակցային տարրը, էգոիզմը պարարտ հող է գտնում զարգանալու: Դրա դեմ պայքարելու համար նպատակահարմար է, օրինակ, ուսուցման մեջ օգտագործել համագործակցային մեթոդը, որտեղ դասընկերոջ ստացած արդյունքը օգտագործվում է, համադրվում աշակերտի ստացած արդյունքի հետ և լուծումը ստացվում է համատեղ ջանքերի միջոցով: Այս դեպքում ավելի մեծ տեղ կարող է ստանալ ալտրուիզմը:
2. Մաթեմատիկայի դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մաթեմատիկական կրթություն ստացած մարդուն դարձնում են ցանկալի՝ ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից: Այդ պատճառով, մաթեմատիկական կրթությունը մեծացնում է ուրիշների կողմից սիրված լինելու

հնարավորությունները: Մյուս կողմից, մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է նրա նկատմամբ մարդկանց հարգանքի զգացմունքը: Հետևապես, մաթեմատիկական կրթությունը նպաստում է մարդկանց միջև բարոյական ներդաշնակության հաստատմանը:

3. Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծացնում է մարդու վերլուծական կարողականությունները, ինչը, իր հերթին, հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել և քննադատաբար վերաբերվել սեփական գործողություններին, ունենալ կայուն համոզմունքներ և չշեղվել դրանցից: Բնականաբար՝ այս ամենը կնպաստեն այն բանին, որ մադու խիղճը լինի մաքուր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Э. Кант, Сочинения, т.4, ч.2, М., 1965:
2. Г. Гегель, Соч., Т. 7, М., 1977:
3. А. А. Гусейнов, Р. Г. Апресян, Э т и к а , М., 2007.
4. А р и с т о т е л ь , Сочинения, т. 4 (Никомахова эти ка .), М., 1983.
5. Л. Е. Балашов, Этика, М., 2008
6. А. Валлон, История античного рабства, 1-3 тт., М., 1936.
7. В. Г. Иванов, Этика, М ., 2007.
8. В.А. Сластенин, Г. И. Чижакова, Переход от авторитарной к гуманистической парадигме как фактор становления и развития педагогической аксиологии. В сборнике авторов “Введение в педагогическую аксиологию. М., 2000.